

ԱՅՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

Կրկ. 50 լր

Երկր. 25 "

ՔՏԱՍԱՀՄՆ

Կրկ. 13 ֆր

Երկր. 7 "

Ամերիկա

Տր. 30 սէնդ

ԿԱՆԻՍԻԿ

Խոր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ

չեն տրուիր:

Ծանուցումներ

մասնաւոր պայ

մաններով:

Հասցէ

DIRAN

PAPAZIAN

ALEXANDRIE

(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄ. 2 ՀԻՆԴՇԱԲԹԻ 1903

ԹԻԻ 284

ԱՆԿԱԽ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Զինացին կը հաւատայ թէ երկիրը վիշապի
ը գլխուն վրայ կեցած է. Բայց և այնպէս եր-
րը կը դառնայ... կեղծիքի վրայ. Կրօնի մէջ,
եկեղծեան մէջ, քրդաքականութեան մէջ եւ
այն իսկ գրականութեան մէջ կեղծիքը կը տի-
պաւորէ. Կեղծիքը այն առանցքն է որուն վրայ
ը դառնայ մեր մոլորեալ մոլորակը:

«Մի՛ սպաններ», կըսէ կրօնքը, «Մի՛ սպան-
ներ» կըսէ իշխանութիւնը, Բայց միթէ՞ աւելի
սպանութիւն կրնար գործուիլ քան զոր գործու-
ած է երկրի վրայ եթէ ընդհակառակն ըսուած
լլար, «Սպանէ՛, կըցածիդ չափ սպաննէ՛»: Կամ
եթէ մարդիկ ստախոսութեան մէջ պիտի կըր-
սյի՞ն աւելի առաջ երթալ եթէ պատուիրուած
լլար, «Սուտ խօսէ՛, միշտ սուտ խօսէ՛»:

Տեսէ՛ք սա մարդիկը, այնպէս կ'աշխատին
կը պարենաւորուին, այնպիսի հոգեբով կը
ռնաւորուին իբր թէ հարիւրաւոր տարիներ
տի ապրին կամ բնաւ պիտի չմեռնին: Ազա-
նութեան վրայ կը ճառեն ու կը խօսին և սակայն
անտի մը մէջ կ'ապրին. Ի՞նչ է աշխարհը եթէ
բանտ մը ընդարձակ ու անսահման: Ի՞նչ է
արդեւութիւնը մարդոց՝ սպանդանցին մէջ ան-
տաւկցօրէն իրենց մորթուելուն սպասող կեն-
սիններէն, գոնէ կենդանիները իրենց մահուան

գիտակցութիւնը չունին: Ո՛չ, մարդիկ կը նմա-
նին աւելի իրենց գլխատումին սպասող մահա-
պարտներուն:

Մեր ազգային շրջանակին մէջ, հին դուիս
թէ նոր դուիս, ամէնքը համամիտ գտնուեցան
թէ մեր եկեղեցապատկան կալուածներուն գրա-
ւումովը աւելի մեծ հարուած կրեց մեր ազգա-
յին գոյութիւնը քան թէ հարիւր հազարաւոր
հայերու կոտորումովը: Պատիւ ունիմ չհամա-
մտելու էրենց, եկեղեցապատկան կալուածներուն
գրաւումը ՚ի յայտ բերաւ մեր եկեղեցական հա-
րըստութեան հետ՝ նաեւ մեր բարոյական աղքա-
տութիւնը:

Գոց պատուհանիդ ետին նստած ես եւ դուրս
սը կը դիտես, ցուրտ քամի մը կը փչէ և պա-
տուհանին ապակիները կը դղրդէ, կ'անձրեւէ, և
ամեն ոք կը փախչտի: Քանի՞ գոհ ես դուրսը չը
գտնուելուդ համար:

Դարուն է, գեղեցիկ ու պայծառ արեգակ
մը կայ, ամեն ոք դուրսն է, անհանգիստ ես,
կը կարծես թէ բանտի մէջ ես, ու դուրս կը նետ-
ուիս փութով:

Մարդկային եսականութիւնը այնպիսի է
որ մարդ երջանիկ չըզգար ինքզինք երբ ուրիշ-
ները իրմէ բաղդաւոր կը տեսնէ, բայց քանի՞ գոհ

է, երբ ուրիշներէն բաղդաւոր կը զգայ ինքը-
զինք .

Միթէ երկինքի բնակիչները պիտի կրնա-
յին երջանիկ ըլլալ եթէ գոյսքը չտեսնէին
անդին :

Եւ բարոյախօս-մարդասէրներ կան որք կը
զարմանան թէ ինչպէս հարուստներն ու մեծա-
մեծները հանգիստ կընեն, երբ այսքան թշուա-
նեւ իրենց շուրջը կը տեսնեն .

Օ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱՉԳԱՅԻՔ

Նոյ . 2 թուականաւ Աղեքսանդրաբօլէն քա-
ղաւած հեռագրի մը նայելով նոյն քաղաքի հայ
եկեղեցապատկան կալուածներն ալ գրաւուած են:

— Ռուսիոյ ներքին գործ. պաշտօնեան հե-
ռագիր մը քաշելով Վեհ. Հայրապետին, կը գը-
րէ Բիւզանդիոն, իմացուցեր է թէ Չարը Տար-
մաշատի մէջ ընդունած այսինքն առած է Ն. Ս.
Օժուլթեան աղերսագիրը, միևնոյն ժամանակ հը-
րահանգ տրուած է եղեր կալուածները գրաւող
վարչութեան որպէս զի առ այժմ դադրի իր այդ-
գործը շարունակելէ: Այս լուրը ոմանք սխալ կը
մեկնեն . իբր թէ Չարը հրամանը ետ առած ու
կալուածներն ալ մեղի վերադարձուցած ըլլայ,
եթէ այդպէս եղած ըլլար, Պոլսական թերթէն
առաջ Վեհ. Հայրիկը կամ Պատրիարքարանը պի-
տի փութային հեռագրով աշխարհի չորս կողմը
աւետել, Ըստ մեզ, շատ հաւանական է որ վե-
րոյշեալ լուրը հիւսիսային յափշտակիչ կառավա-
րութեան կողմէ հրապարակ նետուած է, հայեղոս
լռեցնելու կամ աւելի բիշդը թմրեցնելու համար:

— Լոնտոնէն Ամերիկեան թերթերուն հե-
ռագրուած է որ ոստիկանական հսկողութեան
տակ առնուած են Հնչակեան կեդրոնները:

— Ռիւթէրի գործակալութեան հոկ. 25 մէկ

հեռագիրը Պոլսէն հաղորդած է թէ Տ. Թեոդան
Բաղնիքէն Մուշ զի կուած են, որովհետեւ հայ
զաւի. խմբերը շարժման մէջ կ'երևին եղեր:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էրօթեմէ կը քաղենք:

«Կովկասի կառավարչապետ Կալիցին իշխա-
նը փողոցներէ անցնելու ատեն կը նշմարէ որ հայ
ուսանողներուն պէս Թիֆլիզի Կիւնսաղիօնի ուս-
ուանողներն ալ իրեն բարեւ չեն բռներ, կա-
ղած . կը կանչէ տնօրէնը ու պատճառը կը հար-
ցնէ . այս վերջինը շուարած, կը պատասխանէ
թէ աշակերտները դեռ փոքր ըլլալով անձնապի-
չեն ճանչնար նորին բարձրութիւնը: Այն ատեն
Կալիցին իր պատկերը կը զրկէ կիմնազիտն, պատ-
ուիրելով տնօրէնին որ զայն մուտքի սրահի պատ-
տէն կախել ապա որպէս զի բոլոր ուսանողները
կարենան զինք ճանչնալ: Հրամանը կը գործա-
դրուի, բայց աշակերտք զայրանալով թէ ի-
րենք կը ստիպուին ամեն անգամ որ մանեն վար-
ժարտն, տեսնել երեսը մարդու մը զոր իրենց
հայրենեաց շահերուն ու բարի համբաւին փա-
սաբեր կը դատեն, բաւական բնատուր միջոց մը
կը խորհին այս զգուշի պարտականութենէն ա-
զատուելու . քիչեր մը պատէն արտաքինոց կը
փոխադրեն Կալիցինի կենդանագիրը, վրան կը
մնտեն ու պատին վրայ կը գրեն «Քու տեղի-
հոս է»:

Եւրոպական թերթերու գրուածին նայելով,
Կալիցինի վիճակը ծանրացած է, արդիւնք ըս-
տացած վէրքերուն. քիչին մէկ կողմը կտրուած է
եղեր ու ճակտին վրայի վէրքին պատճառաւ ըն-
դի բորբոքում (էնճիքնախօն) յառաջ եկած է:

— Պոլսոյ մէջ այս օրերս հասոյթի նոր աղ-
բիւրներու ծրագիրներ կը ներկայացուին կա-
ռավարութեան. Այս կարգէն է կենդանեաց վը-
րայ դրուած տուրքը, որոց մէջ է նաեւ տունե-

րու և ագարակներու մէջ պահուած շուկերը. խընդիր է գիտնալ թէ՛ փողոցներու շուկերուն տուրքը ո՞վ պիտի վճարէ .

Բոժ. — Ն. Վ. անձնական գանձը .

Վեհապետները. ինչպէս յայտնի է, կընդունին տարեկան սահմանուած գումար մը, որուն քանակը համեմատելի չէ իրենց կառավարած հրկիրներուն ընդարձակութեանը հետ. հոս կը գնենք ցուցակ մը, որ կը ներկայացնէ իւրաքանչիւր վեհապետի մէկ վայրկեանի մէջ առած դրամը, անոր օրական աշխատութիւնը 6 ժամ հաշուելով .

Ռուսաց Ձարը կընդունի մէկ վայրկեան աշխատութեան փոխարէն՝ 405 ֆր. Աւստրիոյ կայսրը՝ 176 ֆր. Իտալիոյ թագաւորը՝ 108 ֆր. Գերմանիոյ էայսրը՝ 88 ֆր. Անգլիոյ թագաւորը՝ 75 ֆր. Սպանիոյ թագաւորը՝ 72 ֆր. Շուէտիինը՝ 48 ֆր. Պաւերիոյ թագաւորը՝ 40 ֆր. Սաքսոնիոյ՝ 24, Պելճիքայինը՝ 24 ֆր. Տանիմարքայինը՝ 18 ֆր. Վիւրթեմպերկինը՝ 16 ֆր. Փրանսաի նախագահը՝ 9 ֆր. Ռումանիոյ թագաւորը 8 ֆր. Յունաստանինը՝ 8 ֆր. Սերպիոյ 8 ֆր. Միացեալ Նահանգաց նախագահը 2 ֆր.

ԱՊԵՐԱԽՏԸ

Լամբարին լոյսը շիջած էր արդէն, երբ գիշերուան թանձր մթութեան մէջ լուսոյ նշոյլ մը սպրդեցու սենեկին մէջ, այդ լոյսը առհաստա չեալ յուսոյ մը վերջին շնորհն էր և այդ շնորհը բնութեան մէկ պարպէր, որ վերջին անգամ գլխով խեղճ անառակին վրայ, կը տարածէր վեր ալը զոյն պաշտպանելու ու անոր տիղմաթաթուխ վիճակը բարւոքելու համար .

• •

Օր մը իր անվայել բարուցը ի պատիժ՝ իւր

վերջին յոյսը եղող միակ աղջիկը հեռացաւ քովէն, ընդհանուրին ահարկու զրպարտութեանցը մատնելով զայն և զգացնել տալով անոր՝ — ապերախտին — թէ պատիւը նուիրական գանձ մ'է, զոր աշխարհիս վրայ որ և իցէ բանի մը հետ պէտք չէ փոխարինել .

«Մարդը սխալական է, պէտք է ներելու ըսաւ Որ էն և գլխով նորա վիճակին, զրկեց վերջին լուսոյ նշոյլը, պարգեւելով անոր, երկրորդ կենակից մը, միամիտ, յօժար, աշխատասէր և տնայէն .

Գիշ մը ժամանակ վերջ, սեւթոյր ամպեր նորէն եկան արեւու եւ լուսնի ճառագայթները խափանելու, որովհետեւ փոթորիկ կար նորասրտին մէջ, բայց հովը գլխով անոր վրայ, ցրուեց այդ ամպերը, հարծելով թէ ապերախտը այլեւս ինքզինքը երախտապարտ պիտի զգայ .

Ու զաւակը եկաւ նորէն գտաւ զինքը, բայց սա չբաւականացաւ իր կորուսեալը գտնելով, անարգից նուիրական ամուսնութիւն մը, փնտռեց ուրիշ մը, տալու համար անոր իւր սիրտն ու էութիւնը .

Ի տես այս ամենուն, օր մ'ուր յանկարծ քովէն հեռացաւ զաւակը, որուն անաղարտ անուան շուրջը անօրինակ ու անտեղի լուրեր կը շրջէին սրճարանաց ու տուներու մէջ, գնաց աղջիկը, ուխտելով անգամ մ'ալ չարտասանել անոր անունը՝ որուն մէջ մի տառերուն վրայ ահռելի անէծքներ թափած էր .

Ասոր վրայ, ապերախտը յարգողներն ալ, բարեկամներն ալ սկսան մի առ մի հեռանալ անկէ .

Ամեն տան պէտք է յիշել «Ձիք ինչ ծածածուկ որ ոչ յայտնեցի» ու այսպէս չի դահավիժիլ .

Բովանդակ մարդկային ընկերութիւնը միահամուռ կ'անիժէ ու կը դատապարտէ զանոնք որ ապերախտ կամ անհաստատարիմ գտնուելով, անմեղ զաւակներուն պատիւը իրենց հանգստութեանը կը զոհեն .

ԳՆԴԱՍԵՂ

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ ՄԸ

Համայնաճարմ շիշերը չկոտրելու միջոց մը

Կանթեղի կամ դամբարներու (լամպա) շիշեր, ինչպէս նաև տան մէջ գտնուած ուրիշ ապակեայ անօթներ չկոտրելու դիւրին միջոցն է հետևեալը. վերոյիշեալները պաղ ջրով լեցուն կոնքի մը մէջ տեղաւորելէ ետքը կրակին վրայ դնել, երբ ջուրը եռալ սկսի մէջը քիչ մը աղ նետելու է. 20 վայրկեան եռալէն ետքը կոնքը կրակէն վար առնելու և թողելու է որ կամաց կամաց պաղի: Այս գործողութեան ենթարկեալ շիշերը այլ ևս չեն ճաթիր և ցուրտին ու տաքին յանկարծակի փոփոխութեանց կը դիմանան.

ԽՈՆԱՐՀՈՒՄՆ ԲԱՅԻՑ

«Նեքեւ» ին ներկայ Յոգ. Գ. Դէմքը.

Տակաւին երէկ, պարտաճանաչութեան դէմ մեղանշողները քարկօծող պարոններ՝ այսօր իրենց պարտապահանջներուն փաթիլ, մանքաւ կը նետեն.

Փուշարկութեան ժամանակ շատեր՝ խաթեր համար, առանց պարունակութիւնը գիտնալու, իրենց տրուած քուէթուղթերը կոյրզկուրայն քուէտուփին մէջ կը նետեն.

Կարգ մը հայրենասէր (?) յեղափոխականներ՝ վշտերնին ամօքելու համար համադամ մեղքներով օլի, քօնեաք և գտրեջուր կը նետեն.

Վաթկած մատմաղէններ երբ իրար գլուխն են, ճանչուր երկտասարդաց վրայ մէջերնին վիճակ կը նետեն.

Կարգ մը ջերմեռանդ պարոններ՝ կիրակի օրերը եկեղեցիին բակը կեցած՝ անցնող օրիորդներուն խօսք կը նետեն.

Աստուածավախ ու խղճահար(?) խանութայաններ՝ վաճառակտնին ապրանքը կլլելու համար խարդախութեամբ ներս կը նետեն.

Ոգեւից ըմպելիքին փասակարութիւնը քարոզող կարգ մը պարոններ՝ իրենք պաշինալա գտնան նէ՝ շունչ չառնելով մէկմէկու ետեւէ կը նետեն.

«Առուտուր չի կայ, չենք շահիր կոր» ըսող լալկաններ՝ մինչև կէս գիշեր գինեառունը նստած, զեղխութեամբ կը նետեն ու կը նետեն.

Ապաշխարել ու պահքը բռնել յորդորող շատ մը տէրպապաններ՝ իրենք պահքի օր ծախերնուն տունը գտած ֆիւրյաստքին կոտորները չի ծածկել ներս կը նետեն.

Ու ինծի պէս շատեր ալ, հացի համար, իբր գեղարուեստի սիրահար՝ ինքզինքնին թուտերաբեմ կը նետեն.

Մէն-թօ

Ծ Ի Ծ Ա Ղ

Հիւանդին մէկը ծանծաղամիտ բժիշկի մը դիմելով, կըսէ.

— Տօքթօր, ի՞նչ ուտելու է որ չմնասէ, ինչ կուտեմ կը դպչի կոր:

— Նախ և առաջ, կըսէ բժիշկը, միտը շատ փելով ուտելը աղէկ չէ. քիչ եփած միսն ալ մէջը միքրոպ կը պարունակէ:

— Է՛, ըսել է միտ ուտելու չէ՛:

— Է՛հ կըսէ տօքթօրը, կ'ուզես նէ մի՛ ուտեր, այնուհետև ոչ թէ՛ խմելու է և ոչ ալ խահուէ. երկուքն ալ չիղերը կը գրգռեն.

— Շատ աղէկ:

— Ոգելից ըմպելի բնաւ մի՛ գործածեր,

— Շատ աղէկ:

— Հացը թարմ մի՛ ուտեր, ստամոքսին կը փնասէ. օթեկն (պայաթ) ալ մէջը միքրոպ կը պարունակէ.

— Տօքթօր, ամեն բան զրեթէ արգիլեցիր, չո՛ւր ալ չը խմեմ.

— Զուրը, կըսէ տօքթօրը, եթէ հում խմուի՝ զանազան միքրոպներ կը պարունակէ, խի՛ եթէ եռացած խմուի, սնունդը կը կորսնցնէ.

Ասոր վրայ հիւանդին համբերութիւնը հասած, կը գոչէ, Տօքթօր, չըսե՛ս որ ապրիլը աւելորդ է:

Անգլիացի ճամբորդ մը ամբողջի մարդա-
կերներու ցեղապետին կը հարցնէ .

— Դուք որ ձեր երկրին վեհապետն էք, ֆը-
րանսացիները աղէկ են թէ անգլիացիները .

Յեղապետը . — Իրաւոր չեմ կրնար որոշակի
լուր տալ . քանի որ մինչև այսօր ֆրանսացի մը կե-
րած չեմ .

Մայրիկ , քեզի բան մը ըսե՛մ .

— Առէ՛, ճաշի ժամանակ պզտիկները չեն խօսիր .

— Բայց . . .

— Առէ՛ կըսեմ քեզի : Փոքրիկը կը լռէ , ու
ճաշը ըմնալէն վերջը հայրը կը հարցնէ տղուն .

— Հիմա խօսէ՛, պարոն , ի՞նչ պիտի ըսէիր
մայրիկիդ .

— Պիտի ըսէի թէ՛ Լուիզան դուրսի ջուրին
աղբիւրին բերանը բաց թողուց , որ մէկ ժամէ ի
վեր կը վազէ . . .

Մայր եւ որդի

— Ժա՛ղ , Միլտոն որ բանաստեղծ էր միան-
գամայն կոյր , անոր դժբաղդութեան պատճա-
ռը ի՞նչ էր .

Որդին բաւական մտածելէ վերջ . — Բանաս-
տեղծ ըլլալը .

Աղքատ մը՝ քոֆը ունենալով իր շնիկը , փո-
ղոցի մը անկիւնը կեցած կը մուրար .

— Ողորմեցէ՛ք պարոններ անկար աղքատին .

Անցորդ մը մօտենալով աղքատին , կը տես-
նէ որ կոյր չէ , սւտի զարմանք կը հարցնէ .

— Բայց պարոն , դուք որ ինծի պէս աղէկ
կը տեսնէ՛մ , ինչո՞ւ կոյր եմ բոկելով կը ստէք .

— Ներեցէք պարոն , չեմ ստեր , կոյրը ես
չեմ , այլ՝ շունս .

Թուաբանը . — Պարոն Լեւոն , 6էն 3 հանեա
նէ ի՞նչ կը մնայ .

— Ենթադրենք թէ դուն վեց խնձոր ունիս ,
անոնցմէ երեքը ինծի տաս նէ անդին ի՞նչ կը
մնայ .

— Վեց կը մնայ .

— Ինչէ՛ն վեց կը մնայ .

— Որովհետեւ չեմ ուզեր քեզի տալ .

Հայր եւ որդի .

— Դէ՛որդ , ֆրանսերէն քերականութիւն կը
կարգամ ըսելով կը պարծենաս , հաւկիթը ի՞նչ
բառ է .

— Գոյական է , հայրիկ .

— Արական է թէ իգական .

— Խօսօգ ելլայ նէ արական կըլլայ , հաւ ել-
լայ նէ իգական .



Հէրիֆին պիրի՝ արթըգ խըրսըղըղա գարար
վէրմիշ օլուպ , պիր կիւն եօլտա կիտէրքէն էսկի
տօսթլարընտան պիրինէ թէսատիւֆ իտէր .

— Նէ՞ իշ իլէ մէշղուլ սըն .

— Էյի թավսիյէլէր սայէսինտէ պանգայա
կիրմէյէ մուվաֆֆազ օլտում .

— Նէ՞ վագըթ .

— Տիւն կիծէ . . .

— Մատամ . իշիթտիմ քի տօքթօռունուզու
տէյիշտիրմիշսինիզ , սէպէպի նէ՞ տիր .

— Աման էֆէնտիմ , սօրմայընըղ . կէչէն հաֆ-
թա իշիթտիմ քի կիթմիշ պիր ֆուգարա գը-
զըյլա նիշանլաէմըղ . էօյլէ պիր պուտալայա քէն-
տի էօմրիւմիւ նա՛սըլ էմնիյէթ իտէյիմ .

ՍԱՐԳԻՍ ԹԱՇՃԵԱՆ

Կը ծանուցանէ արգոյ հասարակութեան թե-
երկարժամանակ յԱթեմֆ Սիմկերի մեմեմայի գոր-
ծարանին մէջ աշխատած ըլլալով , հիմա եկած ու
հաստատած է Շարս Զապթիէի վրայ , Սուֆ-էյ-
թապսիսին . եւ կը նորոգէ կարի ու կօշիկի մեմե-
մաներ եւ ամէն տեսակ գործիքներ , խոստանալով
գոհացնել իրեն դիմողները .

ՏԵՂԵՂԻ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Նօքլէ

Շիք հագուած միւսիւ ֆինկ-ֆօնկ մը, ար-
զուհալ պեխերով, հօթ-ֆօռմ գլխարկով, փառք
քեզ Աստուած օձիքով ու տէրն ինք ողորմի քալ-
ուածքով, սովորութիւն ըրած է երբ երկաթու-
ղի նստի՝ իրմէ տուտակ պահանջող պաշտօնէին
օսկի մը ցուցնել՝ մանրուք չունիմ՝ ըսելով, ու
երբ կայարան կը հասնի, օսկին աւրելով տոմ-
սակագինը չի վճարելու համար նա՛ քոյրոյ, կը-
ծիկը զը դնէ:

Դիտող



Շաքաքական Հանքէն

Դրական, Դիսական եւ Մանկավարժական
Խմբագիր-Տնօրէն

ՄԻՀՐԱՆ ԱՅԲԱՆԱԶ

Ճօխ և հրահանգիչ պարունակութեամբը ար-
տասահմանի համար իր տեսակին մէջ առաջինը
եղող սոյն մանկավարժական գեղատիպ հանդէսը
կուգայ մեծ պակաս մը լրացնել:

Ի սրտէ յաջողութիւն մալթելով մեր նոր
պաշտօնակցին՝ ծիար Ա. քանազի, ջերմապէս կը
յանձնարենք սոյն պատուական հանդէսը որդեւէր
հայրերուն որ բաժանորդագրուելով, իրենց զաւ-
կները այս կրթական «Պարտէզ»-էն չի զրկեն:

Բաժնեկիւնն է Եգիպտոսի համար տարեկան
60 դրշ. արտասահման 16 ֆր. կամ 6.5 րուպլի
կամ 3 տոլար:

Հասցէն է. — Խմբագրութիւն «Պարտէզ»-ի,
Աղեքանդրիա (Եգիպտոս) Պագոս-Ռամլէ:

ՏՊԱՐԱՆ



«Հայեղի»-ի սպարանին մէջ դիտարկուելի գնով
կը սպագրուին առեւտրական տներու հաւար
աւելն յեզմէ՝ Բարիգեան վերջին դրոքեւմք հե-
տաքրաւարժ, պահեւադարդ եւ գունաւոր փոխ-
րիկ ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ աշ-
ցեւնոս, հասցէտու, հարսանեկան հրաւիրագիր,
մահազդ, մանկագրիս, պահարան, տնակ. եւն.

Ուրիշ քաղաքներէ եղած յանձնարարութիւն
աշ փութով կը կատարուին:

ՅԱԿՈԲ ԳՐԱԿԷՕԶԵՍԻ

Սոգ-էշ-Արքարին

Կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդաց քե
ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս յաշկապէս
քերել տուած է Զինական, Հեղիական եւ Օեյա-
նի ընկիր եւ հոստէս քէյեր, որոնց գործածութիւ-
նը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է:

Կը վաճառէ նաեւ մազի հաւար ընկիր ներ-
կեր աւելն գոյնէ: Դիմերը յախաւոր:

Հետեւեալ գիրքերը կը ծիարուին Տիար Կա-
րապէտ Աստուածատի քով. Շէրիֆ բաշա.

Փիլիկ Աղբոր Հարսնիք	դրշ. ողջ
Այիւնի Լեքայիթ, հայաստ եւ	" 1.5 "
քրքարաւ գործաշիքներ	8 " "
Դրպանի Երազան	50 սնդի
Դագան Դօնա, գօնէսի	20 փոյ
Մանճուպիքի Միսեւաթը	20 "

ԱՇՈՏ ՓԱԼԱԵԱՆ

Տպագրական աւելն տեսակ գործերու կաշուա-
նիս, փորագրիչ, քէ տուախի եւ քէ պղինձի վրայ,
կը պատրաստուին նաեւ վաճառականական կնիք-
ներ՝ մեծադէ եւ քաւոյն:

Աղեքանդրիա, Թրանֆ փողոց քիւ 22